Թակոր ճալի հեռացաւ քաղաքներու համբայէն,
Հայրենապատ կը վառէր հազար ջահեր ոսկեղէն
Պալատներու հակառին։ Գուսանն յիշեց ամէն բան,
Հրաշալիքները Մտքին և հոխութիւնը մարդկան,
Եւ հոգւոյն մէջ ամփոփուած, առանց ետին դառնալու,
Բռնեց ուղին ովկէանի, լուռ, մտատանջ, և հեռու
Ճակատագրին որ եղաւ իր առաջնորդը միայն
Եզերաբախտ օրրոցէն մինչև շիրիմ հանգստեան...
Հոն, ուր երբեմն առանձին, մազերն հովին, գլխաբաց,
Աւազին վրայ կը նստէր, երազայի՜ն, վերացած,
Եւ ալիքներ քաղցրիկ մրմունջներով կ'օրրէին
Իր արխոյութիւնը բարի և իրիկուան ծիրանին
Եկաւ հանգչելու, ո՛չ մէկ բառ շրթունքին վրայ՝ զոր արդէն
Կընքած էր Մահը վաղուց, ո՛չ մէկ հառաչ իր սրտէն...
Սեղմելով քնարը կուրծքին հոն քընացաւ յիշելով
Ծովուն հէքեաթն հրաշալի, արտասուաթոր աչքերով
Դարձաւ աստղի մը ամպոյն որ կը դողար, և առկայծ՝
Կ'անհետանար, կը փախչէր իր նայուածքէն մթամած...

***

Արշալոյսին ձկնորսներ ծովափին վրայ հանելով
Գըտան աշուղը մեռած։ Ալկի՛ոնի փունջերով
Զայն կը ծածկէր ովկէանը լալագին, որպէս մայր,
Ու վեհափառ գլխուն մօտ անոր քնարը կ'իյնար.
Կուրծքին վըրայ կը փայլէր հաճանչաւուխոտ, անագին,
Ընդելուզուած արտասուք, այն մարգարտեան հէքեա-
[թին, ...
Ո՞վ տօսախին մէջ փորեց լոյսին այդ բոյնը՝ լացող
Արտին համար գուսանին, ո՞վ սափորն այդ մաքրաշող
Քնարին ցաւոտ յանջքին մէջ քանդակելով, զայն գաղտնի
Լեցուց սրտի մ'արցունքէն ու մարգրիտէն Ովկէանի...

***

Ձըկնորս մ'առաւ այդ քնարն այլ եւ գաղա՛ղ երգերու,
Հանեց մարգրիտը կուրծքէն, ու պատրաստ էր ներելու
Թելեր տօսախն, երբ տեսաւ իր ձեռքին մէջ ապշահար
Միայն խեցի մ'անկենդան ուր Ովկէանը կուլա՜ր....

ԱՐՍԷՆ–ԵՐԿԱԹ

« Ցնորականները »
անտիպ

# ԹԱՄ... ՓՈՐՈՏԱՆ

(ԱՆՀՐԱԺԵՃՏ ԳԻՏԵԼԻՔ)

(Ճար. տես. Բզմ. 1919 էջ 313)

1912 Հրաւէր Հայրենեաց (են, քանի մը շեշտեր)։

1916 Բամբ որոտաճ թմբիւնք բարձուստ յԱյրարատեան դաշտն ի վայր։
Հրաւէր հայրենեաց հոյակ ընդհանուր — Հոգիք հայկազանց...
Որք երկնուորին պսակին էք կարօտ — ՈՐՔ երկնաւորին
Փառաց երկնաՅորդ. — Հապօճ — Հայրենավրէժ հայկազունք
... գունդ ի գունդ — ի զէն ի վրէժ օճ անզր յառաջ...

Բ. ՏՈՒՆ

1865 Հայկեան փանդռանց որոտնդոտ (են)
(Տող 1, 5,) Ճոխեղճ շանթառաք (են. առանց ը'ի. մինչ պէտք է)։

1874 Դառնագոռոչ անդրաձայնէ Պարսիկ կերկերն, ի շեփոր։
Ճարժէն հրեշտակք բեւս լուսազողողջս,
Ճիւաղք ի ՃԻՋ ՍՈՒՐ (!!!) կայտռեն ի դժոխս.
Ճոխնդն շանթ...

1901 (Տող 2, 6) Դառնագոռոչ (են). Սարափին (են)։

1908 (Բ. տիպ։ Տող 2,) Դառնագոռոչ (են) կերկերն ի շեփոր.

© National Library of Armenia

1908 (Հայրենիք. տող. 2, 3, 4, 5, Դառնագոռոչ (ըն) պարսիկ կերկերն (ըն).
Շարժեն հրեշտակք քեւ լուսաղողղոջս,
Ծիւաղք ՃԻԻԱՂԱՑ (!!!),
Շռինդ չանթառաք (ըն),
Սարսափին

1910, 1912 և 1916 (Չունին, ոչ այս՝ ոչ ալ յաջորդ տուները)։

1919 Սխալներուն մասնակից։ – Համեմատ. «Տաւրոս»ի)։

Գ. ՏՈՒՆ

1865 Մամիկոնեան (են) զոգ ԾԱԼ ԾԱԼ – (տող 1 և 5) – Վըրէժ...

1874 (Տող 1, 4, 5, 6,).... ԾԱԼ ԾԱԼ,
Վըրէժ կանչէ արեան կարմիր Վարդանայ.
փոնչեալ բոցաշունչ գափր (ըն),
Թագմամուտ Վարդի (ըն)։

1901 Մամիկոնեան սաւառնեցաւ դրօշն (ևայլն)
Հեծեալ հրաձոյգ (ևայլն)՝.... կարմիր Վարդանոյ.

1908 (Բ. տիպ). (Տող 1, 3) ...դրօշն...
Հեծեալ հրաձոյգ (առանց ըթի)։

1908 (Հայրենիք. – Տող 4, 5) կարմիր Վարդանայ,
փոնչեալ բոցաշունչ տափր ի գարշապար,

Դ. ՏՈՒՆ

1865 (Տող 3) Ի գոռհ ի գոռհ (փոխանակ դոռհի)՝
1874 (Վերինին պէս)։

1901 (Տող 2, 3, 4) ... Մասիք սարսին,...
Ի ԳՐՈՀ Ի ԳՐՈՀ տալ (!! ըն),
Ցասանին ԴԱՇՆԱԿՔ՝ (ևայլն)
(Տող 5) .... տէգ առ տէգ,
1908 (Տող 2, 3, 4, 5,) ... Մասիք սարսին
Ի ԳՐՈՀ Ի ԳՐՈՀ տալ (ևայլն)
Ցասանին ԴԱՇՆԱԿՔ՝ (ևայլն)
.... տէգ առտէգ,

1908 Անշուշտ ակնախոյս (աչքէ փախած) և ոչ թէ մտաբոյս (խելքէ փչած) քմահաճոյքով մ'է որ «Հայրենիք Երգարան»ին մէջ կը պակսի միայն այս չորրորդ տունը։

Ե. ՏՈՒՆ

Սոյն խոչընդոտն եղած է՝ ը գիրը՝ մինչև այսօր իսկ, մեր ոչ միայն տպագրողաց այլ նոյն իսկ ամենահամբաւ բանաստեղծներուն։ Ըստ կարծեաց այս անշուք տողերը գրողին, տաղաչափուած գրութիւններու (ոտանաւորի, բանաստեղծութեան) մէջ՝ ՊԷՏՔ Է Ը ԳԻՐԸ ԱՆՊԱՏՃԱՌ

© National Library of Armenia

ՆՇԱՆԱԿՈՒԻ ՄԻՇՏ. որով հեղինակի մտքին համեմատ ուղիղ ընթերցումը կ'ապահովագրուի... և տեղի չեն ունենար այլևս տարաժամ խանգարումները ներդաշնակութեան (յաւելագրութիւններով անտեղի ըլլին)։

1901 Արիք ի կռիւ քաջակորովքդ ընդ կորակոր հըրոսն Արևաց.
Ի սուր ի սուսեր, կարշնեղ յաղեղունս՝
Ըզ սեաւ Սասանեանց ջարդել կառափունս.

1908[բ.] Ի սուր ի սուսեր, կարշնեղ յաղեղունս՝
Ըզսեաւ Սասանեանց ջարդել կառափունս.

1908 [Հայրենիք.], Ի սուր, ի սուսեր կարշնեղ յաղեղունս,
Զսեաւ սասանեաց ջարդել կառափունս*։

(Ա. տուն, 8.)... հայրենավրէժ հոյլկազունք։
(Դ. տուն, 4.)... կարմիր Վարդանայ։
(Ե. տուն, 1.)... հրոսն արևաց.
(Զ. տուն, 2.)... հայոց վրեժխնդիրք.
(Զ. տուն, 6.)... ԶՊԱՐՍ հերքեսցէ։ (փոխանակ) = «ըզՊարսն հերքեսցէ»ի։
(Է. տուն, 6).... ընդ հայս հայեսցեն (փոխանակ) = «Ընդ Հայս հայեսցին»ի (եայլն)։

Միշտ աղաւաղուած է նաև «Հապ'օն»ը, գրուելով հապօ՛ն։

Զ. ՏՈՒՆ, ա. տող.

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1850 | Մինչև | ցե՞րբ, | ցե՞րբ | սուգ | ունի | զՀայս. | հատէ՛ք | զարտօսր | որբք | այրիք. |
| 1858 | » | ցե՞րբ | ցե՞րբ | » | » | » | » | » | » | այրիք, |
| 1867 | » | » | » | » | » | » | » | զարտօսր՝ | » | » |
| 1898 | » | » | » | » | » | » | հատէք | » | » | այրիք։ |
| 1901 | » | ցե՞րբ, | ցերբ | » | » | զՀայս, | հատէ՛ք | » | » | » |
| 1908(բ.) | » | ցե՞րբ | ցե՞րբ | » | » | » | » | » | որբք | այրիք, |
| 1908(Հ.) | » | » | » | » | յինի ի Հայս, | | » | » | որբք, | այրիք, |
| 1912 | » | » | » | | ունի զՀայս. | հատէք | զարտօսր՝ | որբքայրիք. | | |

Ինչպէս տեսանք՝ և պիտի տեսնենք առաջիկայ տողերուն վրայ՝ գրեթէ միակ զանազանութիւնը կը կայանայ շեշտերու և կէտադրութեանց մէջ։

Հ. Գրս. ԱՑՏԸՆԵԱՆ

---

* Բայց աննբև սխալներէն (վասն զի ամենադիւրաւ կրնան զանազանել, բերնէբերան ըլլալ գերան, [«Զըսեաւ» «սասանեմ» ու] ջարդել կառափունս), նկատելի է նաև յաւելումը պէսպէս կետադրութիւններու։
Վերջինը (1908), առանց հարկի փոփոխած է նաև ուրիշ ձևեր։

---

# ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

## ՀԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ Հ. ԱՃԱՌԵԱՆԻ

«Բազմավէպ»ի խմբագրութիւնս ստացաւ հետևեալ լուսաբանութիւնն, զոր հաճութեամբ կը հրատարակենք.

«Յունուարի թիւին մէջ Պ. Աճառեան կը հրատարակէ ցանկ մը (էջ 18) որ Ատեմ բառով կ'սկսի և կը հարցնէ. Ինչ լեզուի բառ է»։

Թող ներուի ինծ ուրեմն ներկայիս տալ իրեն փափաքած լուսաբանութիւնը։

Ապահովաբար Ատեմ բառը արաբերէն է, որ կը նշանակէ՝ ՍԵԻ։ N. W.

© National Library of Armenia